

Ու ոչ այլ գրող՝ որ նոր նորագէտ
Ե՛կ Աւագի ալիք Տարածեցի
Ու առ ամենոքի գրանքս որ լսեցի:
Ե՛կ Աժանաս, լայլոյս ձայնակից,
Իաներբն քո են Պատարագի,
Բայց իմ հսկող տէրըն չերևի:
Ոչ մեկնուի ու ոչ բացայայտի:
Ոչ այլ պայծառ Գարողըն ասուի,
Ոչ այլ նըման քեզ տէր գրտանի:
Ոչ 'ի քո բանք այլ որ ասլորի,
Ոչ այլ հսկող Թեք քո տարածի:
Ոչ այն անքուն ակըն բոլորի:
Ոչ այլ հեղեղ արցունքն իջանի:
Անտանելի ճծեն՝ այլ չըբտուի:
Ձայնեմ վանիցն՝ որ հովիւ չունի:
Կարօտ եղև արթուն հովըւի:
Ու Աստուած, ու զայս բանս այլ գըրեցի,
Որ ով լինի՝ գերեմ զինք չըբնի:
Իմ տէրն արթուն էր յամեն տեղի,
Կիրթ էր ու վարժ ամէն իմաստի:
Կենդանի սուրբ էր ու ոչ քուպիտի:
Վարուքն ամբի՛ն՝ նըման Աովսէսի:
Սրտին ողորմ՝ նըման Պաւղոսի:
Աղքատասէր՝ նըման Յիսուսի:
Ներսէս՝ պըսակ էր յեկեղեցի,
Ձարթուցանէր զամենն 'ի բարի:
Ներսէս՝ ոչ առ ծովիցն 'ի տեղի:
Հեղ և հանգարտ արթնոցն 'ի բարի:
Ներսէս արթուն էր գէ՛մ գիշերի,
Հանէր 'ի դուռի զցայտն 'ի կարգի:
Հետ սահմանէր ըզկարգն 'ի տեղի,
Հետ խոկալով գըրէր գրուի:
Երբ առաւօտ լինէր ցորեկի՝
Սկիզբն գնէր նա պատարագի:
Ներսէս՝ ցասունն էր ընդգէ՛մ ախից:

Ձար խորհրդոց չունէր նա տեղի:
Բայց զուարթուն էր 'ի պատարագի,
Հեշտ և կամակ եղբարցն ամենի:
Ներսէս՝ աղբիւր անցամաքելի
Ունէր 'ի դուռին 'ի յիւր գովելի:
Հետ տղերքէր յազագս ամենի:
Հետ արտասուէր 'ի պատարագի:
Ներսէս՝ վստահ էր 'ի սէրն Յիսուսի,
Մեղաւորաց տայր զեկեղեցի:
Յիշէր ըզբանն մեծ տէրունի:
Թէ՛՛ Ես եկի վանց մեղաւորի:
Ներսէս՝ այրեաց էր խնամած ու,
Որոցըն հետ տեղի խօսեղու:
Ունեւորացն օրինակ բարւոյ,
Ձուներորացն էր տուն կենսւոյ:
Աւաղ մըտացն՝ որ դադարեցաւ:
Աւաղ գըրլին՝ որ խոպանացաւ:
Աւաղ բանին՝ որ պակասեցաւ:
Աւաղ տեսիցն՝ որ Թառամեցաւ:
Աւաղ բառին՝ որ աւաղեցաւ:
Աւաղ գերեացս՝ որ որբ մընացաւ:
Դու, Տէր, գըտար որում ցանկացար:
Դու, Տէր, հասար ու՛մ կարօտացար:
Դու, Տէր, առեար որ վատակեցար:
Դու, Տէր, տեսար որում ջանացար:
Դու, Տէր, տուար ու՛մ անուանեցար:
Դու, Տէր, հանգեար՝ զե աշխատեցար:
Ես աղաչեմ զիմ Տէրը՜ք բարի,
Ձեռանընունդ ծառայս քո գերի,
Որ զայս լայլ բանը գըրեցի:
Գիտեմ որ մեծ կաս այժմ Յիսուսի,
Մունըր կրկնաւ վանն իմ ցանկալի:
Տուր աղաչանս ինձ աղերսալի:
Դառնալ 'ի հող, ինձ կեանք չըպիտի՞ր »

Խ Ղ Ո Ի Ն Ջ

Անբարեկամ, անըտանի,
Ախարհիս մէջ իբրև պանդուխտ,
Քաղուիլ ապրիլ յիւրում խրդի,
Անցընելով կեանք անօգուտ:
Սիրտը տըկաւ՝ անձին սիրով,
Տունը՝ իմով միայն լեցուն:
Գունէն երբեմն դուրս նայելով՝
Եղիւր ածեւ ընկերներուն:

Անցած տեղին՝ յայտնի նըլան,
Հետքեր թողուլ իւր գարընթեան:
Ա՛նէն ծաղիկ անուշահոտ՝
Թըքտտելով կանաչ արօտ,
Իւր տանը մէջ իբր 'ի բանդի
Ապրիլ մեռնիլ՝ տըրտմութեամբ լի:
Այս է պատկեր գարը խրդունջին:
Սոյն կենսագիր Ինքնամոլին:

